ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԹԱԴԵՎՈՍԻ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԲ.00.06.-«Միջազգային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВАРДАНЯН АСМИК ТАДЕВОСОВНА

МЕЖДУНАРОДНОЕ ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ПРАВА НА ОБРАЗОВАНИЕ И ПРОБЛЕМЫ НАЦИОНАЛЬНОЙ ИМПЛЕМЕНТАЦИИ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.06 – “Международное право”

ЕРЕВАН-2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի «Գլաձոր» համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Ի. Վոլովա

իրավաբանական գիտությունների թեկնածու Վ.Դ. Վարդանյան

Առաջատար կազմակերպություն՝ «Հայաստանում Ֆրանսիական համալսարան» հիմնադրամ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013թ-ի հոկտեմբերի 14-ին, ժամը 14^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ-ի սեպտեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском университете “Гладзор”

Научный руководитель: доктор юридических наук, профессор В.А. Оганесян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор Л.И. Волова

кандидат юридических наук В.Д. Варданян

Ведущая организация: Фонд “Французский университет в Армении”

Защита состоится 14 октября 2013 г., в 14^{00} часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 12 сентября 2013 г.

Ученный секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент А.Г. Вагаршян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ժամանակակից միջազգային իրավունքում կրթությունը դիտվում է որպես բարձրագույն, հիմնարար արժեք և հասարակական բարիք: Ներկա տեղեկատվական հասարակարգում կրթությունն ու գիտելիքը վերածվել են հասարակությունների և պետությունների զարգացման կարևորագույն նախադրյալի ու շարժիչ ուժի: Ավելին, դրանք ընկալվում են որպես հասարակական կյանքի շարունակականության[1], պետությունների առջև ծառացած խնդիրների լուծման ու նպատակների իրականացման հիմնական միջոցներից մեկը: Ունենալ ժամանակի պահանջներին համահունչ կրթական համակարգ, երաշխավորել կրթության իրավունք միջազգային նորմերին ու սկզբունքներին համապատասխան՝ նշանակում է կայուն հիմքեր ստեղծել հասարակության և պետության առաջընթացի, մարդու կենսական կարևոր շահերի ապահովման համար:

Միջազգային հանրությունը, գիտակցելով հասարակական կյանքի բոլոր բնագավառներում կրթության առանցքային դերն ու նշանակությունը, նկատի ունենալով գլոբալացման մարտահրավերները, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման փաստը և այլ հանգամանքներ, միջազգային իրավական կարգավորման է ենթարկում կրթական հարաբերությունները՝ պետությունների համար սահմանելով համապատասխան պարտավորություններ՝ կրթության իրավունքի երաշխավորման ու պաշտպանության, պետությունների կրթական համակարգերի միասնականացման, դրանց առաջադիմական զարգացման նկատառումներով:

Վերոնշյալ հանգամանքներով է պայմանավորված ատենախոսության թեմայի ընտրությունը:

Ատենախոսությունը ներառում է միջազգային իրավունքում կրթության իրավունքի կարգավորման հիմնախնդիրների լայն շրջագիծ: Նախ՝ միջազգային իրավունքի խնդիրներից է արձագանքել տեղի ունեցող փոփոխություններին՝ հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարգավորելով կրթաիրավական հարաբերությունները, սահմանելով համապարտադիր վարքագծի կանոններ պետությունների համար և ձևավորելով համապատասխան կառուցակարգեր ու գործիքակազմ միջազգային կրթաիրավական նորմերի, ինչպես նաև այս բնագավառում պետությունների պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման համար: Այս առումով, առաջնահերթ են դառնում կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի, սկզբունքների, չափանիշների ուսումնասիրումը, բացերի վերհանումը, ինչպես նաև կրթության իրավունքի միջազգային իրավական երաշխավորման և պաշտ-

[1] *Dewey J.* Democracy and Education: An Introduction to the Philosophy of Education, New York, Macmillan, 1930, էջ 8-9:

պանության գործող կառուցակարգերի առաջադիմական զարգացման անհրաժեշտության հիմնավորումը:

Պետությունները, իրենց հերթին, պարտավոր են բարեխղճորեն իմպլեմենտացնել կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերն ու սկզբունքներն իրենց ազգային օրենսդրություններում և կատարել այս բնագավառում ստանձնած իրենց պարտավորությունները: Այս տեսանկյունից առաջնահերթ է դառնում կրթության իրավունքի վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային նորմերի ու սկզբունքների՝ ՀՀ կրթական օրենսդրության մեջ իմպլեմենտացիայի գնահատականի խնդիրը:

Հայաստանի Հանրապետությունը կրթության իրավունքը երաշխավորող ինչպես համընդհանուր, այնպես էլ տարածաշրջանային պայմանագրերի մասնակից է, Բոլոնիայի գործընթացի անդամ: Դրանով պայմանավորված՝ ՀՀ կրթական օրենսդրությունը ենթարկվել և ենթարկվում է բազմաթիվ փոփոխությունների: Չնայած դրան՝ միշտ չէ, որ այն համապատասխանում է ՀՀ-ում առկա նոր հասարակական և իրավագիտական իրողություններին, ինչպես նաև միջազգային նորմերին, սկզբունքներին ու չափանիշներին: Ուսումնասիրությունը հեղինակին հնարավորություն է տվել համակարգված ձևով գնահատել ՀՀ կրթական օրենսդրության համապատասխանությունը միջազգային նորմերին ու չափանիշներին, բացահայտել թերություններն ու բացերը, դրանք դիտարկել օրենսդրական զարգացման ընդհանուր միտումների համատեքստում, սահմանել այն նոր մոտեցումները, որոնք կնպաստեն ինչպես կրթության իրավունքի հետագա իրավագիտական հետազոտմանը, այնպես էլ ոլորտին առնչվող իրողությունների գործնական օրենսդրական կարգավորմանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է այս իրողությունների տեսական արժևորման և իրավական հիմնավորման անհրաժեշտությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության հիմնական նպատակներն են՝

- քննության առնել կրթության իրավունքի երաշխավորման և պաշտպանության ժամանակակից միջազգային իրավական համակարգը, հիմնավորել դրա զարգացման անհրաժեշտությունը,
- հիմնավորել կրթության առանցքային դերն ու նշանակությունը ժամանակակից պետությունների ու հասարակությունների կյանքում,
- հստակեցնել կրթության իրավունքի տեղը մարդու իրավունքների միջազգային համակարգում,
- հիմնավորել կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների ՀՀ օրենսդրությունում իմպլեմենտացիայի բարելավման անհրաժեշտությունը և մատնանշել դրա կատարելագործման ուղիները:

Նշված նպատակներին հասնելու համար փորձ է արվել առաջադրել և լուծել հետևյալ խնդիրները.

- պարզել կրթության իրավունքի սոցիալական բնույթը, դրա տեղը մարդու իրավունքների միջազգային համակարգում, հարաբերակցությունը մարդու այլ իրավունքների հետ,
- սահմանել *«կրթության իրավունք»* հասկացությունը,
- վեր հանել կրթության իրավունքի ձևավորման ու զարգացման պատմաիրավական նախադրյալները,
- համակողմանիորեն լուսաբանել կրթության իրավունքի երաշխավորման միջազգային իրավական հիմքերի ձևավորումն ու զարգացումը,
- լուսաբանել ժամանակակից միջազգային իրավունքում կրթության իրավունքի իրավական երաշխիքները, պաշտպանության կառուցակարգերն ու գործիքակազմը,
- բացահայտել կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային իրավանորմերի իմպլեմենտացիայի ներկա վիճակը ՀՀ-ում,
- մշակել գիտականորեն հիմնավորված կոնկրետ առաջարկություններ՝ ՀՀ օրենսդրության մեջ կրթության վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիայի բարելավման ուղղությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ: Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտը կրթության իրավունքն է՝ որպես մարդու միջազգային իրավունքի նորմերով ճանաչված և երաշխավորված բնական իրավունք:

Ուսումնասիրության առարկան՝ մարդու իրավունքների միջազգային համակարգում կրթության իրավունքի դերի և նշանակության, դրա սահմանման, ձևավորման ու զարգացման պատմության, միջազգային կոնվենցիոն երաշխիքների, միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմների ուսումնասիրման ու ՀՀ օրենսդրությունում կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիայի, կրթության իրավունքի իրացման երաշխավորման, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման ապահովման միջոցների հետ կապված հարաբերությունների ամբողջությունն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետազոտության նպատակների ու խնդիրների իրագործման արդյունքներով: Հեղինակը, ամբողջական ձևով ներկայացրել և վերլուծել է կրթության իրավունքի ժամանակակից միջազգային իրավական կարգավորման և երաշխավորման վիճակը, դրա միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմները և առաջարկել է դրանց կատարելագործման կոնկրետ ուղիներ: Քննարկվել և վերլուծվել է կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիան ՀՀ օրենսդրության մեջ, բացահայտվել են առկա խնդիրներն ու առաջարկվել դրանց լուծման հիմնական ուղիներ:

Ատենախոսության հեղինակն առաջարկում է հայրենական և արտասահմանյան իրավագիտության մեջ ընդունված *«կրթության իրավունք»* հասկացության իր սահմանումը:

Հետազոտությամբ տեսական և գործնական առումներով հիմնավորվել է միջազգային իրավունքում ակադեմիական ազատության համար հստակ երաշխիքների ամրագրման, մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և ղեկավարելու իրավունքի ճանաչման, կրթության նպատակների վերանայման, և դրանք տեղեկատվական հասարակության և գլոբալացման մարտահրավերներին, միջազգային հանրության առջև ծառացած ներկա խնդիրներին ու նպատակներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը:

Հետազոտության արդյունքներով առաջարկվել է կրթություն ստանալու իրավունքի միջազգայնորեն ճանաչված մատչելիության, հասանելիության, ընդունելիության և համապատասխանության երաշխիքների շարքին դասել նաև կրթություն ստանալու իրավունքի միասնականությունը:

Ատենախոսությամբ հիմնավորվել է կրթության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը, որի հետ կապված մշակվել և ներկայացվել են կոնկրետ առաջարկներ:

Հիմնավորվել է նաև կրթության իրավունքի՝ մարդու իրավունքների միջազգային համակարգում առաջնային լինելու հանգամանքը, դրա առանձնահատկությունը՝ կապված այն բանի հետ, որ վերջինս, դասվելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների շարքին, ուղղակիորեն կապված է քաղաքական ու քաղաքացիական իրավունքների հետ և, հետևաբար, կրթության իրավունքին հատուկ են նաև իրավունքների այս խմբին բնորոշ հատկանիշները:

Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվել բացահայտել կրթության իրավունքի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիայի առկա վիճակը, վեր հանել հիմնական խնդիրներն ու առաջարկել դրանց լուծման կոնկրետ ուղիներ՝ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման նպատակով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:

1. Հեղինակը գտնում է, որ ներկա ժամանակաշրջանում «կրթություն» հասկացության իրավաբանական սահմանման մշակմանը զուգահեռ առանձնակի կարևորություն է ձեռք բերել «կրթության իրավունք» հասկացության՝ բոլոր պետությունների համար ընդունելի բնորոշման մշակման խնդրի լուծումը: Ասվածի համատեքստում, ատենախոսը գտնում է, որ *«կրթության իրավունքը, մարդու կրոնափիլիսոփայական, բարոյական և այլ համոզմունքների հիման վրա սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական, մշակութային և հոգևոր հավակնությունները բավարարելու նպատակով, միջազգային իրավունքով ճանաչված և պետության պոզիտիվ իրավաստեղծ գործունեությամբ երաշխավորված բնական իրավունքն է»:*

2. Եթե միջազգային մակարդակով պետությունների համար կրթության՝ որպես մարդու սուբյեկտիվ իրավունքի ամրագրման ու կարգավորման համընդհանուր վարքագծի կանոնների սահմանման հարցում էական դեր կատարեցին XX դարի սկզբներին Ազգերի լիգայի հովանավորությամբ ընդունված ազգային փոք-

ռամասնությունների վերաբերյալ և կրթությանը վերաբերող դրույթներ նախատեսող միջազգային պայմանագրերը, որոնք, որպես դաշնակից երկրների միմյանց հետ համագործակցող և պարտության մատնված ազգերի միջև խաղաղության պայմանագրեր, կոչված էին, *inter alia,* հետպատերազմյան Եվրոպայում պահպանելու ազգային փոքրամասնությունների կրոնական, լեզվական և կրթական իրավունքները, ապա ՄԱԿ-ի ստեղծմամբ, ըստ էության, սկսվեց կրթության իրավունքի միջազգային իրավական կոնվենցիոն հիմքերի ձևավորումը, որտեղ փորձ արվեց արտացոլել կրթության իրավունքի՝ որպես մարդու իրավունքների կարևոր բաղադրատարրի թե՛ ազատական, թե՛ սոցիալիստական հայեցակարգերը:

Հեղինակի կարծիքով, ներկա ժամանակաշրջանում, գլոբալացման, տեխնոլոգիաների արագ զարգացման և տեղեկատվական հասարակության մարտահրավերներով պայմանավորված, անհրաժեշտ է նախ՝ *կրթությունը համապատասխանեցնել ժամանակի և հասարակության պահանջներին, և երկրորդ՝ կրթության իրավունքը դասել մարդու առաջնային իրավունքների շարքին:*

3. Հեղինակը գտնում է, որ պետությունների միջազգային ընտանիքը քայլեր պետք է ձեռնարկի ակադեմիական ազատության հարաբերությունները կարգավորող միջազգային նորմեր և սկզբունքներ սահմանելու ուղղությամբ, մասնավորապես, անհրաժեշտ է ընդունել *Ակադեմիական ազատության մասին կոնվենցիա*, որի միջոցով, ի թիվս այլնի, կկարգավորվի և կերաշխավորվի դասավանդման ազատությունը, հետազոտողների՝ ազատորեն իրենց հետազոտության թեման և մեթոդները որոշելու, ուսանողների՝ ուսման ոլորտն ընտրելու և բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարմանը մասնակցելու, ակադեմիական համագործակցության իրավունքները, ինչպես նաև անհարկի պետական միջամտությունից համալսարանների ազատության և ինքնավարության ինստիտուցիոնալ երաշխիքների ամրագրումն ու պաշտպանությունը:

4. Մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և ղեկավարելու իրավունքի առնչությամբ բացակայում են միջազգային իրավական հստակ երաշխիքներ ու կառուցակարգեր:

Մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և ղեկավարելու ազատությունը կրթության իրավունքը երաշխավորող ժամանակակից միջազգային համընդգրկուն համաձայնագրերի շրջանակներում չի ճանաչվել, դրանցում ամրագրվել են միայն այս ազատությունը չսահմանափակող երաշխիքներ:

Խնդիրն այն է, որ բազմաթիվ պետություններում գործում են մասնավոր ուսումնական հաստատություններ, որոնց իրավական կարգավիճակը, գործունեության սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները սահմանված են միայն պետությունների ներպետական օրենսդրությամբ, և պրակտիկայում բացակայում են մասնավոր ուսումնական հաստատությունների նկատմամբ միասնական մոտեցում, ընդհանուր բնույթի միասնական նորմեր, սկզբունքներ, իրավունքներ և պարտականություններ: Մինչդեռ, *միջազգային իրավական կար-*

գավորման ու երաշխավորման պետք է արժանանան մասնավոր ուսումնական հաստատությունների՝ պետական ուսումնական հաստատությունների հետ իրավահավասարության, պետությունների կողմից հավասար քաղաքականության ու վերաբերմունքի ապահովման, մասնավոր ուսումնական հաստատությունների պետական ֆինանսավորման, ինքնավարության ու ազատության և այլ հարցեր:

5. Կրթության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության առկա կառուցակարգերը չեն ապահովում այս իրավունքի արդյունավետ և լիարժեք պաշտպանությունը: Ժամանակակից միջազգային իրավունքում կրթության իրավունքի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները հիմնականում կա՛մ կիսադատական, կա՛մ վերահսկողական բնույթ ունեն և օժտված չեն լայն իրավասությամբ, մասնավորապես, կրթության իրավունքի խախտման համար պետություններին պատասխանատվության ենթարկելու իրավունքով: Միևնույն ժամանակ, ձևավորված վերահսկողական մարմինների (կոմիտեների) գործունեությունը ոչ բոլոր դեպքերում է հրապարակային և թափանցիկ: Կրթության իրավունքի միջազգային պաշտպանության առումով առանձնահատուկ դեր ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որն իրավասու է խախտված կրթության իրավունքի վերականգնման նպատակով նախատեսել վնասի փոխհատուցում՝ որպես պետությանը պատասխանատվության ենթարկելու միջոց: Սակայն, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ ամրագրված կրթության իրավունքի մեկնաբանությունը պետությունների համար չի առաջացնում պարտավորությունների լայն շրջանակ, և, փաստորեն, կրթության իրավունքի ցանկացած խախտում չէ, որ կարող է քննության առարկա դառնալ Եվրոպական դատարանում: Ատենախոսի կարծիքով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է *ժամանակակից միջազգային իրավունքում կոնկրետ քայլեր ձեռնարկել կրթության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմների կատարելագործման, դրանց արդյունավետության բարձրացման, գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու համար, ինչը գիտականորեն հիմնավորված և մանրամասն ներկայացված է սույն աշխատանքում:*

6. Կրթության իրավունքը կարող է համարվել միջազգայնորեն երաշխավորված, եթե պետություններն ապահովեն կրթություն ստանալու իրավունքի մատչելիությունը, հասանելիությունը, ընդունելիությունը և համապատասխանությունը: Ներկա պայմաններում կրթության ոլորտը ենթարկվում է բարձր աստիճանի միասնականացման: Դրա ապացույցն է Բոլոնիայի գործընթացը, որն արդեն միասնական նպատակների ու խնդիրների շուրջ միավորել է 47 պետություններին: Կրթության գլոբալացման պայմաններում պետությունները պարտավորվել են ապահովել միասնական կրթական քաղաքականություն ու գործընթաց, առաջնորդվել համանման նորմերով, սկզբունքներով ու չափանիշներով: Ուստի, անհրաժեշտ է *կրթություն ստանալու իրավունքի մատչելիության, հասանելիութ-*

յան, ընդունելիության և համապատասխանության շարքին դասել նաև կրթության միասնականությունը:

7. Կրթության իրավունքի վերաբերյալ թե՛ համընդհանուր, թե՛ տարածաշրջանային միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ 1948թ. Համընդհանուր հռչակագրում, 1966թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, 1989թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում և միջազգային իրավական մյուս փաստաթղթերում ամրագրված են կրթության նպատակները: Ատենախոսը գտնում է, որ ներկա ժամանակաշրջանում միջազգային հանրության և պետությունների առջև ծառացած խնդիրներն էապես փոխվել են, 20-րդ դարում ընդունված միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված կրթության իրավունքի երաշխիքային համակարգն այսօր ի զորու չէ լիարժեքորեն կարգավորել 21-րդ դարում պետությունների և հասարակությունների առջև ծառացած խնդիրները և մարտահրավերները: Ուստի, անհրաժեշտ է *վերանայել և միջազգայնորեն սահմանել կրթության իրավունքի նոր նպատակներ և դրանց իրացման նոր մեթոդներ:*

8. Կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիան ՀՀ օրենսդրության մեջ որոշ դեպքերում բարեխիղճ չի իրականացվել, ինչը կհանգեցնի ինչպես միջազգային իրավունքի ***Pacta Sunt Servanda*** սկզբունքի խախտմանը, այնպես էլ կվնասի ՀՀ կրթական համակարգի առաջադիմական զարգացմանը: Միջազգային նորմերին ու չափորոշիչներին համապատասխանեցնելու առումով՝ կրթության իրավունքի երաշխավորման, կարգավորման ու պաշտպանության ոլորտում՝ ՀՀ օրենսդրության մեջ առկա են բազմաթիվ թերություններ, բացեր, կոլիզիաներ, որոնց վերացումը պահանջում է կրթաիրավական նորմերի արմատական վերանայում: Այս ուղղությամբ ատենախոսության մեջ առաջարկվում են լուծման կոնկրետ ուղիներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան բազմաթիվ հեղինակների աշխատություններ: Հետազոտվող հիմնահարցերի լուսաբանման գործում նշանակալի դեր են կատարել այնպիսի հայտնի արտասահմանյան հեղինակների աշխատություններ, ինչպիսիք են՝ Մ.Վ. Բագլայը, Ռ.Ֆ. Բաթսը, Կ.Դ. Բայթերը, Դ. Բելլը, Ջ. Գրուֆը, Ջ. Դյուինը, Ա. Էյդեն, Դ. Էվանսը, Ա. Թոֆլերը, Ն. Հասֆելսը, Դ. Հոդգսոնը, Մ. Նովակը, Պ.Ի. Նովոգոռոդցևը, Մ. Շայնինը, Վ.Ի. Շկատուլլան, Մ.Մ. Սեպուլվեդան, Վ.Մ. Սիռիխը, Ջ.Հ. Սփրինգը, Ե.Վ. Վիրդազը, Ե.Դ. Վոլոխովան, Ա.Ն. Տալալաևը, Կ. Տոմաշևսկին և այլք:

Ատենախոսության մեջ շոշափվող այս կամ այն հարցի առնչությամբ անդրադարձ է կատարված նաև հայ հեղինակների՝ Ռ. Ավագյանի, Ա. Դիլանյանի, Ա. Եսայանի, Գ. Հարությունյանի, Վ. Հովհաննիսյանի, Վ. Քոչարյանի, Հ. Պետրոսյանի և այլոց ուսումնասիրություններին:

Տեսական աղբյուրների շարքը համալրված է նաև պատմության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության և քաղաքագիտության ոլորտների տարբեր հեղինակ-

ների, մասնավորապես, արտասահմանյան՝ Ձ. Դյուիի, Ձ. Լոկի, Ս.Դ. Հարդիի, Պլատոնի, Ժ.Ժ. Ռուսսոյի, Դ. Քենդալի և հայրենական՝ Գ.Ա. Նազիկյանի, Մ.Հ. Սանթրոսյանի, Վ. Երկանյանի, Ս.Կ. Խուդոյանի և այլոց աշխատություններով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԻՄՔԸ: Հետազոտության նորմատիվ հիմք են հանդիսացել միջազգային համընդհանուր և տարածաշրջանային իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությունը, 1960թ. Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիան, 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, 1966թ. Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, 1981թ. Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին աֆրիկյան արձանագրությունը, 1989թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, 1995թ. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան են: Հետազոտության նորմատիվ հիմք են կազմել Բոլոնիայի գործընթացի արդյունքում ընդունված մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցների, մասնավորապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի, Տնտեսական ու սոցիալական խորհրդի բանաձևերը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԱՄԿ-ի իրավական փաստաթղթերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներն ու որոշումները են: Ատենախոսության նորմատիվ հիմք են հանդիսացել նաև ՀՀ Սահմանադրությունը (2005թ. փոփոխություններով ու լրացումներով), «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև կրթաիրավական հարաբերությունները կարգավորող ՀՀ այլ օրենքներ, ՀՀ Կառավարության որոշումներ և այլ ներպետական իրավական ակտեր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ելնելով ատենախոսության թեմայի առանձնահատկություններից և նպատակներից՝ հեղինակը կիրառել է հետազոտության ինչպես ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, պատմական), այնպես էլ մասնավոր կամ հատուկ (իրավահամեմատական, վերլուծական-տրամաբանական, վիճակագրական) մեթոդներ: Դրանց համալիր կիրառումը նպատակ է հետապնդել՝ ապահովել հետազոտության և, առանձին վերցրած, դրա գիտական արդյունքների օբյեկտիվությունն ու արժանահավատությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտության արդյունքում ձևավորված եզրահանգումներն ու հիմնական դրույթները կարող են օգտագործվել ինչպես կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային իրավադրույթների առաջադիմական զարգացման, այնպես էլ այս ոլորտում ՀՀ ներպետական իրավակարգավորումների բարեփոխման նպատակով: Մասնավորապես, հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել

Ազգային ժողովի կողմից՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և կրթության բնագավառում ՀՀ մյուս օրենքների կատարելագործման և դրանք կրթության վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել տարբեր բուհերի իրավաբանական, միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում՝ «Միջազգային հանրային իրավունք», «Միջազգային պայմանագրային իրավունք» դասընթացների դասավանդման ժամանակ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ: Ատենախոսության նախապատրաստական աշխատանքներն ու քննարկումներն իրականացվել են Երևանի «Գլաձոր» համալսարանի Ընդհանուր իրավագիտության ամբիոնում: Ատենախոսության տեսական եզրահանգումներն ու դրույթները ներկայացվել են գիտական կոնֆերանսներում և սեմինարներում, դրանք իրենց արտացոլումն են գտել հեղինակի չորս գիտական հոդվածներում, ինչպես նաև կիրառվել են Երևանի «Գլաձոր» համալսարանում «Միջազգային հանրային իրավունք», «Միջազգային պայմանագրային իրավունք» առարկաների դասավանդման ժամանակ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վեց պարագրաֆներից, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթապարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալն է 169 մեքենագիր էջ:

Ատենախոսության բովանդակային մասը հետևյալն է.

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը ժամանակակից միջազգային իրավունքի, տեղեկատվական հասարակության և ժողովրդավարական պետության ձևավորման նոր պայմաններում, ներկայացվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, վերջինիս իրականացման գիտական մեթոդները, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են նաև այն հիմնական աղբյուրները, որոնք հիմք են հանդիսացել ատենախոսության շարադրման համար:

Ատենախոսության ***«Կրթության իրավունքի միջազգային իրավական հիմքերի ձևավորման սոցիալական և իրավական նախադրյալները»*** վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին գլխի 1-ին պարագրաֆը ***(«Կրթության իրավունքի սոցիալական բնույթը և տեղը մարդու իրավունքների միջազգային համակարգում»)*** նվիրված է կրթության իրավունքի սոցիալական դերի, կրթության և կրթության իրավունքի բովանդակության, մարդու իրավունքների միջազգային համակարգում կրթության իրավունքի դերի և նշանակության բացահայտմանը:

Այս համատեքստում քննության են առնվում կրթության ներգործության ասպեկտները հասարակական կյանքի սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային և այլ բնագավառների վրա: Կրթությունը դիտարկվում է որպես միջազգային հանրության ու պետությունների զարգացման նախադրյալ, դրանց առջև ծառացած որոշակի նպատակների ու խնդիրների իրականացման ու հասարակական կյանքի շարունակականության միջոց: Անդրադարձ է կատարվում կրթության փիլիսոփայական ասպեկտներին, հեղինակն ընդգծում է, որ տարբեր ժամանակաշրջաններում փիլիսոփաների (Ջ. Դյուի, Ս. Հարդի, Ժ.Ժ. Ռուսսո, Ջ. Լոկ, Պլատոն ևն) ուշադրության կենտրոնում են գտնվել կրթությանն առնչվող այնպիսի հարցեր, որոնք բխել են կոնկրետ ժամանակահատվածում պետությունների ու հասարակությունների առջև ծառացած խնդիրներից ու նպատակներից: Չնայած դրան, հեղինակի կարծիքով, կրթության և կրթության իրավունքի բովանդակության ու նպատակների արդի ըմբռնման և համապատասխան փաստաթղթերում (թե՛ միջազգային, թե՛ ներպետական) ամրագրման հիմքում ընկած են այդ ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված մոտեցումներն ու հայեցակարգերը:

Քննարկվում է մարդու իրավունքների միջազգային համակարգում կրթության իրավունքի տեղն ու դերը, կապն ու փոխհարաբերությունը մարդու իրավունքների երեք սերունդների հետ:

Ատենախոսի դիտարկմամբ, մարդու իրավունքների միջազգային համակարգում կրթության իրավունքն ունի առաջնային նշանակություն, ինչը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

1. կրթությունը հիմք է հանդիսանում մարդու համար՝ պահանջելու իր իրավունքների և ազատությունների անշեղ կատարում և անհրաժեշտության դեպքում՝ դրանց պաշտպանություն,

2. կրթության բացակայությունն անհնար է դարձնում հոգևոր և նյութական արժեքների ձեռքբերումը, որը կազմում է մարդու կյանքի անբաժանելի մասը,

3. կրթության շնորհիվ մարդն իր՝ որպես քաղաքացու իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին ձեռք է բերում անհրաժեշտ տեղեկատվություն,

4. կրթության շնորհիվ մարդը հանրայնացվում է, այսինքն՝ պատկերացում է կազմում բարու և չարի, գեղեցիկի և տգեղի, լավի և վատի մասին, մասնակից է դառնում քաղաքակրթության համամարդկային արժեքներին,

5. կրթությունն արժեհամակարգ ու աշխարհայացք ձևավորելու և ընդլայնելու հիմնական միջոց է:

Հեղինակն արձանագրում է, որ տեղեկատվական հասարակության, արագ զարգացող նորագույն տեխնոլոգիաների, գլոբալացման ներկա ժամանակաշրջանում հնարավոր չէ պատկերացնել հասարակություն՝ առանց կրթական բավարար մակարդակի և կրթության իրավունքի իրացման երաշխիքների առկայության:

Առաջին գլխի 2-րդ պարագրաֆը *(«Կրթության և կրթության իրավունքի ձևավորման ու զարգացման պատմությունը»)* բաղկացած է չորս ենթապարագրաֆներից և նվիրված է կրթության և կրթության իրավունքի միջազգային իրավական հիմքերի ձևավորման և զարգացման ուսումնասիրմանը, կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային իրավանորմերի ու սկզբունքների միասնականացման պատմաիրավական աղբյուրների բացահայտմանը: Հեղինակն ուսումնասիրել է նաև հայ ժողովրդի կրթաիրավական սկզբնաղբյուրները, հայկական լեռնաշխարհում կրթության իրավունքի՝ որպես մարդու բնական իրավունքի ձևավորման հիմքերը և կրթական գործի իրականացումն ու կրթության իրավունքի երաշխավորումը Հին աշխարհից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում:

Կրթության և կրթության իրավունքի ձևավորման ու զարգացման միջազգային իրավապատմական ուսումնասիրությունը հեղինակն իրականացրել է՝ այն բաժանելով չորս փուլի՝

1. կրթությունն ու կրթության իրավունքը Հին աշխարհում,
2. կրթությունն ու կրթության իրավունքը Միջնադարում,
3. կրթությունն ու կրթության իրավունքը XVIII-XIX դարերում,
4. կրթությունն ու կրթության իրավունքը XX դարից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանում:

Նման բաժանումը հիմնավորվում է նրանով, որ տարբեր պետությունների կրթության և կրթական համակարգերի միասնականացման և հետագա միջազգայնացման հիմքերը դրվել են դեռևս *Հին աշխարհում* չնայած այս ժամանակաշրջանում կրթության իրավունքը որևէ կարգավորման չի ենթարկվել: *Միջնադարում՝* առանձին պետություններում, ձևավորվեցին համընդհանուր կրթություն ապահովելու անհրաժեշտության օրենսդրական հիմքերը: Ճիշտ է, այդ պետություններն ուղղակիորեն չէին ճանաչում մարդու կրթության իրավունքը, բայց ամրագրում էին մարդու այնպիսի իրավունքներ, որոնք առանց հասարակության կրթական բավարար մակարդակի և համապատասխան կրթական համակարգի առկայության հնարավոր չէր իրացնել: *XVIII-XIX դարերում* եվրոպական առաջատար պետությունները կրթության կազմակերպումը դիտելով որպես պետական գործառույթ, իրենց սահմանադրություններում[2] ամրագրելով կրթության իրավունքը և/կամ կարգավորելով կրթաիրավական հարաբերությունները, ձևավորեցին կրթության և կրթության իրավունքի վերաբերյալ քաղաքակիրթ մոտեցման նոր հայեցակարգ: Ատենախոսի կարծիքով, հենց այս հանգամանքն էր, որ բարոյաքաղաքական և իրավական հիմքեր ստեղծեց կրթության իրավունքի հետագա միջազգայնացման համար: Միայն *XX դարի* կեսերից սկսած կրթության իրավունքը ճանաչվեց որպես մարդու հիմնական իրավունք և լիարժեք իրավական կարգավորման ենթարկվեց թե՛ միջազգային, թե՛ ազգային մակարդակով: Այս փուլը հեղինակը դիտարկում է որպես կրթության իրավունքի համընդհանուր միջազգայնացման փուլ, քանի որ նշված ժամանակաշրջանում ընդունվեցին կրթության

[2] Օրինակ՝ Գերմանական Կայսրության Սահմանադրությունը, 28 մարտի, 1849թ.:

իրավունքը միջազգային մակարդակով ամրագրող առաջին իրավական փաստաթղթերը[3] :

Առաջին գլխի 2-րդ պարագրաֆի 1-ին ենթապարագրաֆը վերաբերում է կրթության և կրթության իրավունքի ձևավորման հիմքերի ուսումնասիրմանը Հին աշխարհում: Այս համատեքստում քննության են առնվում Հին Աթենքի ու Հռոմի կրթական համակարգերը, ինչպես նաև ժամանակի պատմաիրավական հուշարձանները: Արձանագրվում է, որ այս ժամանակաշրջանում կրթության վերաբերյալ գոյություն են ունեցել տարբեր մոտեցումներ ու ընկալումներ՝ մի դեպքում կրթությունը միջոց է եղել պետության քաղաքական նպատակների իրագործման համար, մյուս դեպքում՝ կարևորվել է հանրային գրագիտությունը, մեկ այլ դեպքում՝ այն համարվել է ճոխություն և հասանելի չի եղել հասարակության բոլոր անդամներին: Հատկանշական է այն հանգամանքը, որ ի սկզբանե գործածության մեջ է դրվել ***մասնավոր կրթության*** գաղափարը: Հեղինակի դիտարկմամբ, քննարկվող ժամանակաշրջանում ի հայտ են եկել կրթության բնագավառում խտրականության սկզբնական դրսևորումները, որոնք հետագայում խորացրել են իրենց արմատները՝ արտահայտվելով տարբեր ձևերով ու եղանակներով, ինչը, ըստ հեղինակի, վերջ ի վերջո հանգեցրել է ժամանակակից միջազգային հանրության կողմից Կրթության բնագավառում խտրականության դեմ համընդհանուր կոնվենցիայի ընդունմանը, ինչպես նաև այս ոլորտում խտրականության դեմ պայքարի այլ կառուցակարգերի ու գործիքակազմի ձևավորմանը:

Քննության առնելով Հայաստանի կրթության և կրթության իրավունքի ձևավորման ու զարգացման պատմությունը՝ հեղինակը նկատում է, որ վերջինիս բնորոշ են որոշ առանձնահատկություններ, ինչը պայմանավորված է պատմական մի շարք իրադարձությունների անմիջական ներգործությամբ: Չնայած միշտ չէ, որ հայերն ունեցել են իրենց պետությունն ու պետականությունը, այդուհանդերձ, կրթությունը և կրթության կազմակերպումը մշտապես գտնվել են եկեղեցու, բարձրաստիճան այրերի, հայ իրավական միտքը կերտող անհատների ուշադրության ներքո: Այս մասին է վկայում 356թ. Աշտիշատի ժողովի որոշումը՝ Հայաստանում հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ բացելու մասին[4]: Ատենախոսի կարծիքով, այս որոշմամբ Հայաստանում առաջին անգամ կրթության կազմակերպումը ստացավ իրավական ամրագրում:

Առաջին գլխի 2-րդ պարագրաֆի 2-րդ ենթապարագրաֆը նվիրված է կրթության և կրթության իրավունքի զարգացմանը միջին դարերում: Ներկայացվում և վերլուծվում են միջնադարյան Եվրոպայում և Հայաստանում կրթական համակարգի զարգացումները: Հեղինակի դիտարկմամբ, այս ժամանակաշրջանում սո-

[3] 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 Արձանագրություն, 1960թ. Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիա, 1966թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր և այլ փաստաթղթեր:

[4] Տե՛ս *Ավագյան Ռ.,* Հայ իրավական մտքի գանձարան, (մ.թ.ա. IX դ.-մ.թ. XIX-դ.), Եր., «ՄՆԻԻ ԵՄ - XXI ԴԱՐ», 2001, Հ.1, Աշտիշատի ժողովին վերագրվող կանոններ, հավելված 4, էջ 109-110:

ցիալական դրության վրա հիմնված խտրականության դրսևորումները տեղի են տալիս կրթության ոլորտում սեռային խտրականության դրսևորումների արմատավորմանը: Միևնույն ժամանակ, կրթության բովանդակության ու էության, խնդիրների ու նպատակների վերաբերյալ ձևավորվում և գործի են դրվում ծայրահեղ երկու մոտեցումներ. այն ուղղորդվում է կա՛մ կրոնական կա՛մ քաղաքական շահերի իրագործմանը: Ճիշտ է, հանրային կրթության գաղափարը կյանքի կոչման լուրջ հիմքերի վրա է դրվում, բայց կրթության կազմակերպման հիմքում հաշվի չեն առնվում մարդու շահը, կարիքները և այլ հանգամանքներ: Քննարկվող ժամանակաշրջանում ընդունվել են մի շարք իրավական փաստաթղթեր[5] , որոնք կարևոր դեր են ունեցել կրթության բնագավառում մարդու իրավունքների ապագա միջազգային իրավական հիմքերի ձևավորման և զարգացման համար: Հեղինակի կարծիքով, թեև պետությունները նշված իրավական փաստաթղթերն ընդունելով ուղղակի նպատակ չունեին իրավաբանորեն ամրագրել կրթության իրավունքը կամ կարգավորել կրթաիրավական հարաբերությունները, այնուամենայնիվ, դրանք նախադրյալ հանդիսացան կրթության իրավական հիմքերի ձևավորման ու միջազգային իրավական կարգավորման համար:

Միջնադարյան Հայաստանում, չնայած կրթական որոշ հարաբերություններ կարգավորվել են վարքագծի համապատասխան կանոններով[6], այնուամենայնիվ, կրթության զարգացման համար լուրջ խոչընդոտ են հանդիսացել պատմական իրադարձությունները: Ճիշտ է, մարդու իրավունքներ ամրագրող միջազգային նշանակություն ունեցող փաստաթղթեր չեն ընդունվել, բայց ձևավորվել են իրավական նախադրյալներ կրթության զարգացման համար, և բոլոր միջոցներով փորձ է արվել ուսուցում կազմակերպել Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում:

Առաջին գլխի 2-րդ պարագրաֆի 3-րդ ենթապարագրաֆն ուղղված է կրթության և կրթության իրավունքի XVIII-XIX դարերում միջազգային իրավապատմական հիմքերի ուսումնասիրմանը: Քննության են առնվում Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի կրթական համակարգերի զարգացումները, կրթության իրավունքի ճանաչման սկզբնական դրսևորումները, մարդու իրավունքների ազատական հայեցակարգի ազդեցությունը կրթության իրավունքի ձևավորման ու զարգացման վրա: Առանձին անդրադարձ է կատարվում քննարկվող ժամանակաշրջանում հայ ժողովրդի կրթական գործի կազմակերպմանը:

Արձանագրվում է, որ այս ժամանակաշրջանում էապես փոխվում է կրթության բովանդակությունը. կրոնական կրթությունը, որպես այդպիսին, դադարում է գոյություն ունենալ՝ փոխարինվելով ազգայնական կրթությամբ: Միևնույն ժամանակ, հանրային կրթությունը հասարակության բոլոր անդամների համար դառնում է մատչելի ու հասանելի:

---

[5] 1215թ. Ազատության մեծ հրովարտակ, 1689թ. Իրավունքների մասին անգլիական խարտիա, 1776թ. ԱՄՆ-ի Անկախության հռչակագիր, 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների մասին ֆրանսիական հռչակագիր:

[6] Տե՛ս *Ավագյան Ռ.,* նշվ. աշխ., հավելված 10, հոդված 223: Տե՛ս նաև հավելված 11:

Հեղինակի դիտարկմամբ, պետությունները, ներպետական օրենսդրության միջոցով, աստիճանաբար սկսում են կրթություն տրամադրելու պարտավորություն ստանձնել, ինչն իրավական հիմքեր է ստեղծում նաև դրա հետագա միջազգայնացման համար: Ատենախոսն արձանագրում է, որ ազատական գաղափարներով պայմանավորված, կրթությունն ուղղորդվում է ոչ միայն պետության, հասարակության, քաղաքական իշխանության նպատակների իրականացմանը, այլ նաև դրա կազմակերպման հիմքում դրվում են անհատի շահն ու ձգտումները, նպատակներն ու խնդիրները, այլ կերպ ասած՝ սկսում է ձևավորվել կրթության՝ որպես մարդու բնական իրավունքի գիտակցումը:

Քննարկվող ժամանակաշրջանում հայ ժողովրդի կրթության և կրթաիրավական հարաբերությունների զարգացման վրա ուղղակի ազդեցություն են ունեցել երկու տարբեր կրթական համակարգեր՝ ռուսական և ֆրանսիական, ինչը, հեղինակի կարծիքով, խոչընդոտ է հանդիսացել հայ կրթական համակարգի միասնական առաջադիմական զարգացման համար: Հեղինակի դիտարկմամբ, թեև կրթության ոլորտում ձևավորվել են առաջադիմական նորմեր և սկզբունքներ, այնուամենայնիվ, հայկական կրթական համակարգն էականորեն զիջում էր եվրոպական կրթական համակարգին:

Առաջին գլխի 2-րդ պարագրաֆի 4-րդ ենթապարագրաֆը նվիրված է XX դարից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանում կրթության և կրթության իրավունքի զարգացման պատմության ուսումնասիրմանը: Այս համատեքստում ներկայացվում և վերլուծվում են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի սոցիալ-փիլիսոփայական հայեցակարգերի ազդեցությունը կրթության իրավունքի ճանաչման և պետության կողմից դրա երաշխավորման վրա. քննության առարկա է դառնում Խորհրդային Հայաստանում կրթության կազմակերպումն ու կրթական հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև քննարկվում է Ազգերի լիգայի և ՄԱԿ-ի դերը կրթության իրավունքի՝ որպես մարդու բնական իրավունքի ճանաչման գործում: Անդրադարձ է կատարվում XXI-րդ դարում միջազգային մակարդակով կրթության բնագավառի մարտահրավերներին:

Հեղինակի դիտարկմամբ, մարդու՝ կրթություն ստանալու աներկբա իրավունքը և պետության՝ կրթություն ապահովելու համապատասխան պարտավորությունն առաջին անգամ արտահայտվել են 1936թ. ԽՍՀՄ Սահմանադրության մեջ:

Ատենախոսի կարծիքով, կրթության իրավունքի միջազգային ճանաչման և իրավաբանորեն ամրագրման գործում ուղղակի ազդեցություն ունեցավ կրթության իրավունքի՝ պետությունների ազգային օրենսդրություններով ճանաչվելու և կարգավորվելու հանգամանքը, ինչը ստեղծեց օբյեկտիվ անհրաժեշտություն միջազգային մակարդակով պետությունների համար սահմանելու կրթության իրավունքի ամրագրման ու կարգավորման համընդհանուր վարքագծի կանոններ:

Արդեն XX դարի սկզբից միջազգային ասպարեզում կարելի է հանդիպել կրթական հարաբերությունների որոշակի կարգավորման[7]:

Ատենախոսի դիտարկմամբ, միայն Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումից հետո, երբ *1948թ. ընդունվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը*, ի թիվս այլ իրավունքների, ճանաչվեց յուրաքանչյուրի կրթության իրավունքը: Միջազգային մակարդակով, սա առաջին իրավական փաստաթուղթն էր, որ կրթության իրավունքը դասեց մարդու հիմնական իրավունքների շարքին:

Հեղինակի կարծիքով, XXI դարում կրթության իրավունքը՝ որպես մարդու հիմնական իրավունք ճանաչելու խնդիր այլևս չկա, շատ պետությունների համար բարդությունը վերջինիս իրականացման, երաշխավորման և կրթության բնագավառում ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման մեջ է:

Ատենախոսն արձանագրում է, որ ներկա փուլում կրթության զարգացման հեռանկարները կապված են գլոբալացման և միջազգայնացման հետ: Այս առումով մեծ դեր ունի միջազգային իրավունքը, քանի որ XXI-րդ դարում կրթական հարաբերությունները կարգավորվում և բխում են, առաջին հերթին, միջազգային իրավական նորմերից, սկզբունքներից ու սահմանված չափորոշիչներից, որոնք, այնուհետև, փոխակերպվում են պետությունների ազգային օրենսդրություններում:

Ատենախոսության ***«Կրթության իրավունքի երաշխավորման և պաշտպանության ժամանակակից միջազգային իրավական համակարգը»*** վերտառությամբ երկրորդ գլուխը բաղկացած է երկու պարագրաֆներից: Երկրորդ գլխի 1-ին պարագրաֆը ***(«Կրթության իրավունքի միջազգային կոնվենցիոն երաշխիքները և դրանց առանձնահատկությունները»)*** իր հերթին բաղկացած է երեք ենթապարագրաֆներից և նվիրված է կրթության իրավունքի ժամանակակից միջազգային կոնվենցիոն երաշխիքների և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրմանը:

Երկրորդ գլխի 1-ին պարագրաֆի 1-ին ենթապարագրաֆում քննարկվում են կրթության իրավունքի միջազգային համընդհանուր կոնվենցիոն երաշխիքները: Այս համատեքստում ներկայացվում և վերլուծվում են 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին, 1954թ. Քաղաքացիություն չունեցող անձանց մասին, 1960թ. Կրթության բնագավառում խտրականության դեմ, 1965թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիաների, 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, 1966թ. Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրերի, Կանանց նկատմամբ

[7] Դաշնակից երկրների և Լեհաստանի միջև 1919թ. հունիսի 28-ին կնքված պայմանագրի 8-րդ հոդվածը պաշտպանում էր լեհ ազգին պատկանող ռասայական, կրոնական և լեզվական փոքրամասնությունների՝ իրենց սեփական միջոցների հաշվին ուսումնական հաստատություններ հիմնելու, ղեկավարելու և վերահսկելու իրավունքը, ընդ որում թույլատրվում էր «իրենց լեզուն օգտագործել և կրոնն ազատորեն իրականացնել»: Տե՛ս նաև 1923թ. Ազգերի լիգայի երեխայի իրավունքների մասին հռչակագիրը:

խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1979թ., 1989թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիաների կրթության իրավունքը երաշխավորող համապատասխան դրույթները: Առանձին քննության են ենթարկվում «*պարտադիր տարրական կրթություն*», «*հիմնական կրթություն*», «*հիմնական կրթական կարիքներ*», «*միջնակարգ կրթություն*», «*մտցնել առաջադիմական անվճար կրթություն*», «*կրթության ազատություն*», «*ուսումնական հաստատություններ ստեղծելու և ղեկավարելու ազատություն*», «կրթություն» և այլ հասկացություններ: Ներկայացվում և վերլուծվում են կրթության իրավունքն ամրագրող միջազգային համընդհանուր փաստաթղթերում ամրագրված կրթության իրավունքին վերաբերող դրույթները:

Իր դիտարկումներում հեղինակն արձանագրում է, որ ժամանակակից միջազգային իրավունքում մարդու իրավունքների վերաբերյալ համընդհանուր փաստաթղթերը երաշխավորում են՝ յուրաքանչյուրի կրթության իրավունքը, բոլորի համար պարտադիր և անվճար հիմունքներով տարրական կրթության իրավունքը, բոլորի համար բաց և մատչելի միջնակարգ կրթության, ներառյալ՝ միջնակարգ տեխնիկական և մասնագիտական կրթության իրավունքը, բոլորի համար հավասարապես մատչելի բարձրագույն կրթության իրավունքը՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, ծնողների՝ իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունքը, ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ սեփական կրթական գործունեություն ծավալելու իրավունքը, ֆիզիկական և իրավաբանական անձանց ուսումնական հաստատություններ հիմնելու և ղեկավարելու ազատության չսահմանափակումը, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց կրթության իրավունքը, դպրոցական կարգապահության իրականացումը՝ երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով, կրթության բնագավառում խտրականության արգելքը:

Հեղինակը փաստում է, որ ժամանակակից միջազգային իրավունքը հստակ երաշխիքներ չի նախատեսում ակադեմիական ազատության համար, իսկ մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և ղեկավարելու իրավունքը ճանաչում է ծնողների՝ իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունքի իրականացման համատեքստում: Ատենախոսն արձանագրում է, որ կրթության իրավունքը երաշխավորող մարդու իրավունքների վերաբերյալ համընդհանուր փաստաթղթերով ամրագրված կրթության նպատակները լիովին ուղղված չեն 21-րդ դարում պետությունների ու հասարակությունների առջև ծառացած խնդիրների լուծմանն ու նպատակների իրագործմանը:

Երկրորդ գլխի 1-ին պարագրաֆի 2-րդ ենթապարագրաֆը վերաբերում է կրթության իրավունքի միջազգային տարածաշրջանային կոնվենցիոն երաշխիքների ուսումնասիրմանը: Այս համատեքստում ներկայացվում և վերլուծվում են

1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ, 1981թ. Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին աֆրիկյան արձանագրությամբ, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 1988թ. Սան Սալվադորի արձանագրությամբ, 1990թ. Երեխայի իրավունքների և բարեկեցության մասին աֆրիկյան արձանագրությամբ, 1994թ. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին, 1995թ. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիաներով երաշխավորվող կրթության իրավունքի մասին դրույթները: Քննության են առնվում կրթության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներն ու որոշումները, դրանց հիման վրա արվում են համապատասխան եզրահանգումներ: Հեղինակի դիտարկմամբ, կրթության իրավունքը երաշխավորող թե՛ համընդհանուր, թե՛ տարածաշրջանային միջազգային իրավական փաստաթղթերի հիմքում ընկած են կրթության մատչելիության, հասանելիության, ընդունելիության ու համապատասխանության հատկանիշները, որոնք կազմում են կրթության իրավունքի բովանդակությունը, սերտորեն կապված են միմյանց և ներգործում են մեկը մյուսի վրա: Այս ասպեկտով ատենախոսության մեջ քննարկման առարկա են դարձել կրթության մատչելիության, հասանելիության, ընդունելիության ու համապատասխանության միջազգային իրավական ընկալումները, կրթության իրավունքի երաշխավորման գործում դրանց կարևորությունը: Ատենախոսության մեջ շրջանառության մեջ է դրվում կրթության միասնականության հատկանիշի գաղափարը: Այս առնչությամբ հեղինակը հիմնավորում է ներկա ժամանակաշրջանում դրա երաշխավորման և կրթության վերը նշված հատկանիշների թվին դասելու անհրաժեշտությունը:

Երկրորդ գլխի 1-ին պարագրաֆի 3-րդ ենթապարագրաֆում քննության են առնվում կրթության իրավունքի երաշխավորման առանձնահատկությունները: Այս համատեքստում հեղինակն անդրադառնում է քաղաքական և քաղաքացիական իրավունքների՝ որպես «բացասական», «բացարձակ», «անհետաձգելի» և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների՝ որպես «դրական», «ոչ դատաքննելի», «ծախսատար» իրավունքների միջազգային երաշխավորման առանձնահատկություններին:

Անդրադառնալով այս խնդրին՝ ատենախոսը նշում է, որ, մի շարք հեղինակների կարծիքով, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների երաշխավորումը «քաղաքական խնդիր է և ոչ թե իրավունքի»[8], դրանց միջազգային մշտադիտարկման մեխանիզմները համեմատաբար թույլ են, ինչը խոչընդոտում է վերջիններիս կիրառելիությանն ու բարեխիղճ երաշխավորմանը[9]: Այս աս-

[8] *Vierdag E.W.* The Legal Nature of the Rights Granted by the International Covenant on Economic, Social and Cultural Rights. Netherlands Yearbook of International Law, Vol. 9, Cambridge University Press, 1978, p. 103.

[9] Տե՛ս *Շայնին Մ.,* «Տնտեսական և սոցիալական իրավունքները որպես օրինական իրավունքներ», //Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ: Դասագիրք, 2-րդ լրամշակված հրատարակություն, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ. 2009, էջ 42-43:

պեկտով հեղինակի դիտարկմամբ, կրթության իրավունքն անշեղորեն կապված է մարդու քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հետ, և վերջինիս բնորոշ են այս խումբ իրավունքների հատկանիշները: Հեղինակի կարծիքով, դրանում է կրթության իրավունքի միջազգային երաշխավորման առանձնահատկությունը:

Երկրորդ գլխի 2-րդ պարագրաֆը *(«Միջազգային կազմակերպությունների դերը կրթության իրավունքի միջազգային իրավական կարգավորման և պաշտպանության գործում»)* վերաբերում է ժամանակակից միջազգային իրավունքում կրթության իրավունքի պաշտպանության կառուցակարգերի ուսումնասիրմանը: Այս համատեքստում ներկայացվում և վերլուծվում են ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԱՄԿ-ի, ԵՄ-ի շրջանակներում տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների մշտադիտարկման և միջազգային պաշտպանության նպատակներով գործող մարմինների իրավասությունն ու դերը: Քննության են առնվում, մասնավորապես, կրթության իրավունքի միջազգային երաշխավորման ու պաշտպանության գործում նշված կառույցների կարգավորիչ և պաշտպանիչ գործառույթները: Հեղինակը նկատում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միակ կառույցն է, որն իրավասու է կրթության իրավունքի խախտման դեպքում պատասխանատվության ենթարկել պետությանը՝ վնասի փոխհատուցման մեխանիզմի միջոցով: Նշված մյուս միջազգային կառույցների շրջանակներում գործող Կոմիտեները, որոնք նույնպես համապատասխան գործառույթներ ունեն կրթության իրավունքի միջազգային պաշտպանության ասպարեզում, թույլ են. շատ դեպքերում դրանց գործունեությունը հրապարակային ու թափանցիկ չէ, ինչպես նաև, դրանք օժտված չեն իրավախախտ պետությանը պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ: Հեղինակն արձանագրում է, որ ժամանակակից միջազգային իրավունքում կրթության իրավունքի երաշխավորման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները հիմնականում կա՛մ կիսադատական կա՛մ վերահսկողական բնույթ ունեն և օժտված չեն լայն իրավասությամբ: Ատենախոսության մեջ հեղինակը հիմնավորում է դրանց լիազորությունների շրջանակն ընդլայնելու անհրաժեշտությունը:

Ատենախոսության *«Կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային իրավական նորմերի և սկզբունքների ազգային իմպլեմենտացիայի հիմնախնդիրները և դրանց լուծման հիմնական ուղիները (Հայաստանի Հանրապետության օրինակով)»* վերտառությամբ երրորդ գլուխը բաղկացած է երկու պարագրաֆներից: Երրորդ գլխի 1-ին պարագրաֆում *(«Կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների սահմանադրական իմպլեմենտացիան Հայաստանի Հանրապետությունում»)* ներկայացվում և վերլուծվում է կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիան ՀՀ Սահմանադրությունում: Այս համատեքստում քննության առարկա է դառնում 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, 1960թ. Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիայի, 1966թ. Տնտեսական, սո-

ցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի, 1989թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի, 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության համապատասխան նորմերի ու սկզբունքների հետ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի դրույթների հարաբերակցությունն ու համահունչությունը՝ ՀՀ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման համատեքստում: Հեղինակն արձանագրում է, որ, հիմնականում, ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի դրույթները համահունչ են միջազգային փաստաթղթերով երաշխավորվող կրթության իրավունքի բովանդակությանն ու էությանը: Միևնույն ժամանակ, հիմնավորվում է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Երրորդ գլխի 2-րդ պարագրաֆում *(«Կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիան Հայաստանի Հանրապետության օրենքներում»)* քննության առարկա են դառնում կրթության վերաբերյալ ՀՀ օրենքներում միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիայի խնդիրները: Հեղինակը նկատում է, որ մի շարք դեպքերում ՀՀ համապատասխան օրենքներում առկա է իրավական կոլիզիա, բացեր ու թերություններ՝ կապված կրթության իրավունքի միջազգային նորմերը բարեխիղճ իմպլեմենտացնելու հետ: Հեղինակի դիտարկմամբ, ՀՀ բավականին անելիքներ ունի կրթական օրենսդրական դաշտը կարգավորելու և միջազգային իրավական փաստաթղթերից բխող պահանջներին համապատասխանեցնելու ոլորտում: Հեղինակի կարծիքով, կրթության բնագավառում միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման նպատակով, ՀՀ կրթական օրենսդրությունը ենթակա է բարելավման ու կատարելագործման: Այս համատեքստում հեղինակն առաջարկում է կոնկրետ ուղիներ:

Հեղինակը ներկայացնում և վերլուծում է նաև Բոլոնիայի գործընթացի արդյունքում ընդունված մի շարք միջազգային փաստաթղթերով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ներկա վիճակը: Այս ասպեկտով հեղինակն արձանագրում է, որ, ի կատարումն միջազգային պարտավորությունների, ՀՀ անցում է կատարել բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան համակարգի, ներդրվել է կրեդիտային (չափանիշային) համակարգ, ստեղծվել են ուսանողների, դասախոսների, հետազոտողների միջազգային շարժունության հիմքեր, ձևավորվել է մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային համակարգ ևն: Չնայած դրան, հեղինակի կարծիքով, առկա են մի շարք օրենսդրական խնդիրներ, որոնց լուծման համար առաջարկվում են կոնկրետ ուղիներ:

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության արդյունքները թույլ են տվել հանգել որոշակի հետևությունների և ձևակերպել կրթության իրավունքի դերի ու նշանակության, ձևավորման ու զարգացման, միջազգային ի-

րավական կարգավորման, երաշխավորման ու պաշտպանության, ՀՀ օրենսդրությունում դրա իմպլեմենտացիայի հիմնախնդիրների վերաբերյալ կոնկրետ եզրահանգումներ ու առաջարկություններ, որոնք տեղ գտնելով ատենախոսության *«Եզրակացություն»* բաժնում, ներկայացվում են ստորև՝ աշխատանքի կառուցվածքին համապատասխան.

Հետազոտության արդյունքների հիման վրա ատենախոսը հանգել է հետևյալ եզրակացություններին.

1. Կրթությունը հասարակական բարիք է, այն հիմնարար բարձրագույն արժեք է բոլոր ժողովուրդների համար:

2. Տեղեկատվական հասարակության, ինչպես նաև գլոբալացման ներկա պայմաններում պետությունների ու հասարակությունների զարգացման անկյունաքարը կրթության իրավունքի՝ միջազգային նորմերին ու սկզբունքներին համապատասխան երաշխավորումն է, առաջադիմական կրթական համակարգի կայացման համար միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերի ստեղծումը:

3. Կրթության գաղափարն առաջ է եկել դեռևս աշխարհի առաջին քաղաքակրթությունների հետ մեկտեղ: Շատ պետություններ գոյության սկզբնական շրջանից սկսած ունեցել են կրթական համակարգեր, միևնույն ժամանակ, առանձնանում է Հին հույների կրթությունը, որը հիմք և նախադրյալ է հանդիսացել պետությունների կրթական համակարգի զարգացման, ինչպես նաև դրա միջազգայնացման համար: Այդուհանդերձ, կրթության իրավունքը, որպես մարդու բնական իրավունք, միջազգային իրավունքում ճանաչվել է միայն XX-րդ դարի երկրորդ կեսից սկսած: Սրանում առաջնային ու մեծ դեր է ունեցել պետությունների ներպետական օրենսդրություններով կրթության իրավունքի ճանաչումն ու երաշխավորումը:

4. Ժամանակակից միջազգային իրավունքը համապարփակ կարգավորման է ենթարկել մարդու կրթության իրավունքը: Այն երաշխավորված է կրթության բոլոր մակարդակներում: Պետությունները պարտավորվել են երաշխավորել դրա մատչելի, հասանելի կամ անվճար ու պարտադիր լինելը: Երաշխավորվում է կրթության բնագավառում խտրականության արգելքը, ծնողների և/կամ օրինական ներկայացուցիչների առաջնային իրավունքը՝ երեխայի կրթության տեսակն ընտրելու, իրենց կրոնափիլիսոփայական, գաղափարախոսական ու բարոյական համոզմունքներին համապատասխան ուսուցում ապահովելու գործում: Այդուհանդերձ, միջազգային իրավունքը հստակ երաշխիքներ չի նախատեսում ակադեմիական ազատության համար, ինչպես նաև ուղղակիորեն չի ճանաչում մասնավոր ուսումնական հաստատություններ հիմնելու և ղեկավարելու ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքը: Այս համատեքստում, անհրաժեշտ է ընդունել Ակադեմիական ազատության մասին կոնվենցիա, որի շնորհիվ համապարփակ կարգավորում կստանան այս բնագավառի հարաբերությունները, ինչպես նաև հստակորեն ամրագրել մասնավոր ուսումնական հաստատություններ

հիմնելու և ղեկավարելու իրավունքը, բացահայտել դրա բովանդակությունը և պետությունների պարտավորությունների շրջանակը:

5. Կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային իրավունքի գիտությունը, ինչպես նաև միջազգային իրավական նորմերն ու սկզբունքները, որպես ելակետ ընդունում են այն, որ կրթության իրավունքը համարվում է միջազգայնորեն երաշխավորված, եթե պետություններն ապահովում են կրթության մատչելիությունը, հասանելիությունը, ընդունելիությունը և համապատասխանությունը: Ներկա պայմաններում կրթության ոլորտը ենթարկվում է բարձր աստիճանի միասնականացման: Դրա ապացույցն է Բոլոնիայի գործընթացը, որն արդեն միասնական նպատակների ու խնդիրների շուրջ միավորել է աշխարհի 47 պետությունների: Կրթության գլոբալացման պայմաններում պետությունները պարտավորվել են ապահովել միասնական կրթական քաղաքականություն ու գործընթաց, առաջնորդվել համանման նորմերով, սկզբունքներով ու չափանիշներով: Այս առումով, անհրաժեշտ է կրթության մատչելիության, հասանելիության, ընդունելիության և համապատասխանության շարքին դասել նաև կրթության միասնականությունը:

6. Ժամանակակից միջազգային իրավունքում ամրագրված կրթության նպատակները լիարժեքորեն ուղղված չեն տեղեկատվական հասարակության, գլոբալացման, միջազգային հանրության առջև ծառացած ներկա խնդիրների լուծմանն ու նպատակների իրականացմանը: Անհրաժեշտ է միջազգայնորեն ամրագրել, որ կրթությունը պետք է ուղղված լինի նաև.

- այնպիսի գիտելիքի, հմտությունների ու կարողությունների ձեռքբերմանը, որոնք կնպաստեն տեղեկատվական հասարակության և գլոբալացվող աշխարհի մարտահրավերներին դիմակայելուն,
- անձին՝ նորագույն տեխնոլոգիաներին հաղորդակից դարձնելուն,
- լայնորեն տարածված մի շարք անբուժելի հիվանդությունները կանխելուն:

7. Ժամանակակից միջազգային իրավունքով նախատեսված են կրթության իրավունքի պաշտպանության կառուցակարգեր: Միջազգային այնպիսի կառույցներ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ԱՄԿ-ն, ԵԽ-ն, իրենց համապատասխան մարմինների միջոցով օժտված են կրթության իրավունքի երաշխավորման, այս բնագավառում պետությունների ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման նկատմամբ մշտադիտարկում և վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ: Խնդիրն այն է, որ ոչ բոլոր դեպքերում է այդ մարմինների գործունեությունն արդյունավետ: Բացի Մարդու իրավունքների եվրոպական դատարանից, կրթության իրավունքի պաշտպանության մյուս բոլոր միջազգային մարմիններն ունեն կիսադատական, խորհրդատվական բնույթ, իսկ որոշ դեպքերում դրանք չեն ապահովում գործունեության հրապարակայնություն ու թափանցիկություն: Կրթության իրավունքի միջազգային պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է.

- ընդլայնել ՄԱԿ-ի համակարգում գործող Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Կոմիտեի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համակարգում գործող

Կոնվենցիաների և առաջարկությունների Կոմիտեի լիազորությունները՝ կապված կրթության իրավունքի պաշտպանության հետ. հատկապես նախատեսել իրավախախտ պետությանը պատասխանատվության ենթարկելու կոնկրետ միջոցներ:

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի համակարգում գործող Կոնվենցիաների և առաջարկությունների Կոմիտեի գործունեությունը, կապված կրթության իրավունքի խախտման դիմումների քննության և որոշումների կայացման հետ, դարձնել հրապարակային, թափանցիկ ու մատչելի:

8. Կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային նորմերի ու սկզբունքների իմպլեմենտացիան ՀՀ օրենսդրությունում, որոշ դեպքերում, բարեխիղճ չի իրականացվել: Անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել կրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրական համակարգում, մասնավորապես.

- փոփոխել ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 5-րդ պարբերության առաջին նախադասությունը հետևյալ կերպ. *«Յուրաքանչյուր ոք ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով»:*

- Փոփոխել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը հետևյալ կերպ. *«Դպրոցական տարիքի երեխային ուսումնական հաստատություն ընդգրկելու համար պատասխանատու է համապատասխան պետական մարմինը՝ օրենքով սահմանված կարգով»:*

- Փոփոխել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետը և այն վերաշարադրել հետևյալ կերպ. *«Հայաստանի Հանրապետությունը յուրաքանչյուրի համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն»:*

- Փոփոխել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի առաջին մասի (ա) և (բ) կետերը և դրանք շարադրել հետևյալ կերպ.

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում տրվում է՝

(ա) «հավատարմագրված պետական կամ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ օրդինատուրա, ինտերնատուրա և մագիստրատուրա) ցերեկային ուսուցման ուսանողներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ընդգրկված միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին»,

(բ) «հավատարմագրված պետական և ոչ պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում պետական պատվերով առկա ուսուցմամբ սովորողներին», կամ, մեկ այլ դեպքում՝ կրթության բնագավառում խտրականությունը

բացառելու նպատակով, պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ուսումը շարունակելու համար տրվող տարկետման իրավունքը՝ ***բացառել,***

- Փոփոխել և լրացնել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 8-րդ կետը և նորմը շարադրել հետևյալ կերպ. *«Պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուրի կրթություն ստանալու հավասար հնարավորությունների երաշխավորումը»:*

- Լրացնել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը 6-րդ կետով և ձևակերպել այն հետևյալ կերպ. *«Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ սեփական կրթական գործունեություն ծավալելու իրավունքը, ներառյալ դպրոցներ պահելու, սեփական լեզուն օգտագործելու կամ դասավանդելու իրավունքը: Այս իրավունքի իրականացումը չպետք է խոչընդոտի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ ողջ համայնքի մշակույթն ու լեզուն հասկանալուն և նրա գործունեությանը մասնակցելուն, չպետք է վտանգի ազգային ինքնիշխանությունը: Կրթության ստանդարտը չպետք է ցածր լինի պետության սահմանած կամ հաստատած ընդհանուր ստանդարտից»:*

- Լրացնել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը «Տեխնիկական կրթություն» հասկացությամբ և այն սահմանել հետևյալ կերպ. *«Տեխնիկական կրթություն՝ տեխնիկայի և նրան առնչվող գիտությունների ուսումնասիրություն, գործնական գիտելիքների և «նոու հաու»-ի ձեռքբերում»:*

- Լրացնել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը հետևյալ կերպ. *«Պետությունը երաշխավորում է երիտասարդների և մեծահասակների համար տեխնիկական և մասնագիտական կրթության ուսումնական ծրագրերի կազմումն ու իրականացումը, որպեսզի նրանց հնարավորություն տրվի ձեռք բերել տնտեսական ու սոցիալական զարգացման, ինչպես նաև հասարակության մեջ անձի անհատական ու մշակութային ինքնարտահայտման համար անհրաժեշտ գիտելիքներ ու «նոու հաու»:*

- Լրացնել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը 9-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. *«Հանրակրթության բնագավառում դպրոցական կարգապահության իրականացում՝ երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդների հիման վրա»:*

- Փոփոխել և լրացնել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետը՝ հետևյալ բովանդակությամբ. *«Ազատ լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը: Ուսումնական հաստատությունը պարտավոր է ապահովելու յուրաքանչյուր սովորողի՝ նման գործողություններից կամ անգործությունից պաշտպանված լինելու իրավունքը»:*

- Լրացնել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը և այն սահմանել հետևյալ կերպ. *«Հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը: Դպրոցական կարգապահություն իրականացնել՝ հաշվի առնելով և հիմնվելով սովորողի պատվի ու արժանապատվության և այլ իրավունքների վրա»:*

- Լրացնել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը 10-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. *«Կրթության և ուսուցման բնագավառում ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս, ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը հարգելը»:*

- Ամրագրել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում «հարատև կրթություն» հասկացությունը և դրա նպատակները:

- Փոփոխել ՀՀ Կառավարության կողմից սահմանված՝ ըստ բակալավրի կրթական ծրագրի պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգը, և ճանաչել յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատության իրավունքը՝ իր կողմից ընդունած չափանիշների համաձայն՝ ընդունելության կարգ սահմանելու և իրականացնելու գործում:

- Փոփոխել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետը և այն սահմանել հետևյալ կերպ. *«Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման եռաստիճան համակարգ: Ամփոփիչ ատեստավորումն անցած անձին շնորհվում է առաջին աստիճանում՝ բակալավրի որակավորում, երկրորդում՝ մագիստրոսի, երրորդում՝ դոկտորի»:*

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Կրթության իրավունքի առաջացման և զարգացման պատմությունը // «Գլաձոր»-20 (Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների հինգերորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու), -Երևան 2011, -137-154 էջ:

2. Կրթության իրավունքի սոցիալական բնույթը և տեղը մարդու իրավունքների համակարգում //«Գլաձոր»-20 (Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների հինգերորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու), -Երևան 2011, -155-170 էջ:

3. Կրթության իրավունքը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն // «Օրինականություն», N-71, -Երևան 2012, - 49-53 էջ:

4. Կրթության իրավունքի միջազգային համընդհանուր կոնվենցիոն երաշխիքները // Արդարադատություն, թիվ 1 (20), -Երևան 2013, -11-19 էջ:

Варданян Асмик Тадевосовна

Международное правовое регулирование права на образование и проблемы национальной имплементации (на примере Республики Армения)

РЕЗЮМЕ

В современном международном праве образование считается одной из высших, фундаментальных ценностей и общественных благ, а право человека на образование – естественным и неотъемлемым правом. Наличие созвучности требованиям времени системы образования, гарантирование права на образование в соответствии с международными нормами и принципами означает создание стабильных основ для прогресса общества и государства, обеспечения жизненно важных интересов человека. Не менее важно обеспечение и стимулирование прогрессивного развития международных норм и принципов относительно права на образование.

В данном контексте представленная исследовательская работа посвящена изучению одного из считающихся приоритетными в международной системе прав человека – права на образование. В диссертации автором изучены и раскрыты роль и значение образования в жизни человека, общества и государства, философские представления о нем, цели и задачи, содержание и сущность образования. Автор изучил место права на образование в системе международно признанных прав человека, его взаимосвязь с другими правами человека, обосновал приоритетность права на образование в ряду прав человека. Диссертант всесторонне изучил международные историко-правовые предпосылки формирования и развития образования и права на образование и пришел к соответствующим выводам.

Исходя из необходимости комплексного освещения темы, автор всесторонне представил и проанализировал современную систему международного правового гарантирования, регулирования и защиты права на образование, а также предложил конкретные пути ее совершенствования и реформирования.

В отдельной главе автор проанализировал вопросы имплементации международных норм и принципов относительно права на образование в законодательство Республики Армения, раскрыл существующие проблемы и предложил основные пути их решения.

Научная новизна диссертации обусловлена результатами реализации целей и задач исследования.

В диссертации автором предложено собственное определение принятого в отечественной и зарубежной юриспруденции понятия “право на образование”, сформулированное следующим образом: *“Право на*

образование является естественным правом человека, провозглашенным международными правовыми нормами на основе религиозно-философских, нравственных и иных убеждений человека с целью удовлетворения его социальных, экономических, политических, правовых, культурных и духовных потребностей, реализация которого гарантирована нормами международного и внутригосударственного права".

В исследовании с теоретической и практической точек зрения обоснована необходимость закрепления в международном праве четких гарантий академической свободы, признания права учреждать частные учебные заведения и руководить ими, пересмотра целей образования и их согласования с вызовами информационного общества и глобализации, с целями и задачами, стоящими пред международным сообществом.

По результатам исследования предложено к числу международно признанных гарантий наличия, доступности, приемлемости и соответствия права на получение образования отнести также единство этого права.

В диссертации обоснована необходимость совершенствования механизмов международной правовой защиты права на образование, в связи с чем разработаны и представлены конкретные предложения.

В работе обоснован приоритет права на образование в международной системе прав человека, его специфика, заключающаяся в том, что оно, относясь к числу экономических, социальных и культурных прав, непосредственно связано с политическими и гражданскими правами, и, следовательно, праву на образования присущи также характерные признаки данной группы прав.

В диссертации впервые раскрыто положение дел в вопросе имплементации касающихся права на образование международных норм и принципов в законодательство Республики Армения, выявлены проблемы и предложены конкретные пути их решения с целью обеспечения гарантии права человека на образование в РА в соответствии с международными нормами и принципами, прогрессивного развития образовательного законодательства и системы образования РА, добросовестного исполнения принятых РА международных обязательств.

Учитывая вышеизложенное, а также выдвинутые в диссертации другие предложения, считаем, что работа способствует прогрессивному развитию международных норм и принципов, относящихся к праву на образование, в совершенствованию механизмов международной правовой гарантии и защиты права человека на образование, а также реформированию образовательного законодательства Республики Армения.

Hasmik Tadevos Vardanyan

The International Legal Regulation of the Right of Education and the Problems of National Implementation (by the example of the Republic of Armenia)

Summary

In contemporary International Law education is regarded as one of the topmost, fundamental values and public blessings and the right of education is regarded as natural and inherent right of a human being. To have an educational system in line with the demands of the times, ensure right of education corresponding international norms and principles is to provide stable ground for the progress of society and the state, for assurance of vital interests of an individual. The necessity of assuring and promoting the progressive development of international norms and principles on the right of education by the international family of the states is not of less importance.

On this respect the research is designed to observe the right of education as one of the primary rights in the international system of human rights. The author of the research has observed and revealed the role and significance of education for the individual, society and state, the philosophical perception on the latter, the aims and problems of education, its matter. The author has discussed the role of the right of education in the system of internationally recognized human rights, its correlation with other rights of a human being, has grounded the primary role of the right of education within the series of these rights. The author of the thesis has comprehensively observed the international historical-legal prerequisites for forming and developing education and right of education and has arrived at relevant conclusions.

The author has comprehensively introduced and analyzed the contemporary international legal system of guarantee, regulation and defence of the right of education as well as has suggested specific modes for the improvement of that system.

In a separate chapter the author has analyzed the implementation of the international norms and principles on the right of education in the legislation of the Republic of Armenia, she has revealed current problems and suggested main ways of their solution.

The novelty of the dissertation is conditioned by the results of the fulfillment of its objectives and problems.

By the dissertation the author puts forward her own definition of the concept “Right of Education” accepted in national and international law: “The right of

education is a natural right defined by international legal norms to meet social, economic, political, legal, cultural and spiritual requirements based on religion-philosophical, moral and other contention of a human being; the fulfillment of which is guaranteed by the norms of international and national law".

By her dissertation the author has grounded the necessity for defining definite pledges of academic freedom and recognizing the right of establishing and governing private institutions in International Law, reviewing the objectives of education and conforming them to informational society and globalization challenges, problems and aims of the international society as well.

Based on the results of the research the author has suggested completing the internationally recognized guarantees of availability, accessibility, acceptability and adaptability of receiving the right of education with the unity of the latter.

In the dissertation the author has grounded the primary role of the right of education in the international system of human rights, its peculiarities conditioned by the fact that the latter is directly connected with political and civil rights, being classed among economic, social and cultural rights. Consequently, some characteristic features of this group of rights are also special for the right of education.

By the research the author has revealed the current situation of the implementation of international norms and principles concerning the right of education in the legislation of the Republic of Armenia for the first time; she has revealed the problems and suggested concrete modes of solution with the aim of guaranteeing the right of education in the Republic of Armenia relevant with international norms and principles, progressive development of educational legislation and system of the Republic of Armenia, attending to the international duties diligently assumed by Armenia.

Taking into account the above-mentioned points as well as other suggestions put forward in the dissertation we think that this scientific work will contribute to progressive development of international norms and principles concerning the right of education, development of the system of international legal pledge and defence of the right of education, the improvement of educational legislation of the Republic of Armenia, as well.